ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ АРАКС

N 212
ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս (Էջմ.)համայնք,
Հասցե՝ Դրոյի 2,հեռ.՝ (077) 99-99-30,էլ.փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

«07» նոյեմբեր 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյանին

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս(Էջմ.) համայնքի ղեկավարի N51 և N52 որոշումները:

Առդիր<< 6 >> էջ

Արաքս համայնքի
ղեկավար՝/ /Վ.Գրիգորյան

կատարող՝ Ս.Խալաթյան
093 83-89-69

Մուտք թիվ ԼՐ-19590-2019
«08» 11 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ(ԷՋՄ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<27>> դեկտեմբեր 2018 թ. N 52

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի՝

1)Աղետների ռիսկերի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Աղետների ռիսկերի կառավարման խորհրդի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

2. Խորհրդի անդամներին՝

1) մշակել Արաքս համայնքի աղետների ռիսկերի կառավարման ծրագիրը.

2) մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը իրականացնել համայնքի ԱՌԿ ծրագրի ճշգրտում:

3. Աղետների ռիսկերի կառավարման խորհրդի ղեկավարի տեղակալ Գրիգոր Հովսեփյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված աղետների ռիսկերի կառավարման խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Արաքս համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ԳՐԻՈՐՅԱՆ**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
2018 թվականի դեկտեմբերի 27-ի
N 52 որոշման

ԿԱԶՄ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝

1) խորհրդի ղեկավար՝ Վարդան Գրիգորյան /համայնքի ղեկավար/,
2) խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Գրիգոր Հովսեփյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3) խորհրդի քարտուղար ժ/պ՝ Սանասար Խալաթյան /Աշխատակազմի քարտուղար /,

խորհրդի անդամներ՝
- ավագանու անդամներ՝ Ա.Ասատրյան, Ս.Կարապետյան, Գ.Գրիգորյան,Ս. Մելքոնյան, Ս.Կիրակոսյան , Ա. Մանուկյան
- Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Ա.Համբարձումյան ,
- Հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Է. Թիրաբյան ,
- Տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Ռ.Թաթոյան ,
- Կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Ս.Մարտիրոսյան ,
- Բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Ի. Խաչատրյան ,
- Կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Ս. Կարապետյան,
- Կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝Ա .Ասատրյան,
- Ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Ա. Մանուկյան,
- Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝Ա. Հովհաննիսյան,
- Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Ս.Կիրակոսյան:

Աշխատակազմի քարտուղար ժ/պ՝ Սանասար Խալաթյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
2018 թվականի դեկտեմբերի 27-ի
N 52 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Արաքս համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Արաքսի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ծրագրի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ ծրագրով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ ծրագրում:

1. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) իրականացնում են համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատում,

3) ԱՌԿ ծրագրի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌԿ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Համայնքում ԱՌԿ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը.

7) ԱՌԿ ծրագրի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) Դիմակայուն համայնքե ստեղծելու նպատակով ԱՌԿ գործընթացներում ուսումնական հաստատության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է Համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ

2. ԱՌԿ խորհրդի արձագանքման գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը:

3) Համայնքի բնակչության տարահանման իրականացումը

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/ պատսպարումը

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) Համայնքի բնակչության բժշկական օգնության, սննդով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովման աջակցությունը՝

9) շինարարական աղբի տեղափոխումը,

10) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը:

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

13) բնակչությանը խմելու ջրով ապահովումը,

14) բնակչությանը սննդով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

15) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը:

16) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

17) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը,

18) ճանապարհների, կամուրջների վերականգնման կազմակերպումը, շրջանցիկ ճանապարհների ստեղծումը,

19) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը:

20) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

21) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին:

22) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը,

23) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

Աշխատակազմի քարտուղար ժ/պ՝ Սանասար Խալաթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ(ԷՋՄ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<27>> դեկտեմբեր 2018 թ. N 51

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դ) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել աղետների ռիսկի կառավարման պլանը և 1-ից 11-րդ հավելվածները.
2. Աղետների ռիսկի կառավարման խորհրդին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը իրականացնել պլանի վերանայում:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*